

- 3. ուխտիս (ուխտսի) Այրի վանս եւ տվաք ըն
- 4. ճայ զիմ տուն որ Երեւան է եւ սպա
- 5. սաւորքս խոստացան ի տարին: 2: աւր
- 6. ժամ: Գ: Ատոմայ: Գ: Արքաին

ԾԱՆՈԹ.— Մխիթ. Ստ. եր. 9. Չորրորդ տողում «որ յեր եւ ան» ուղղելի: Հինգերորդ «սպասաւորք սորա», ընդգծուածը. չկայ: Օսւ. Mat. հետեւում է Մխիթարեանին եւ ունի «Ազամ», «Ազամայ», որ սխալ է:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 89-90

Բ. Գրքի եր. 65.

ԳԵՂԱՐԴ

Նախընթացի տակը*

- 1. Կամաւն Այ ես Ումեկս էտու [: 4 :] / դահեկան ի սբ...
 - 2. ...տվի [որ ն] որոգեցին Այրիվանաց [համ?] ար ի: ի վանքս սպասաւորքս խոստ(աց)ան ի տարոջն Ե աւր ժամ Ա Ո[սկ] հատին: մէկ Դ: ինձ. կատարիչք ցս
 - 3. Վարդս շինեցի զմի խորան եւ [զհըն- ձանն որ է մերձ յիւրեա]նց [ս եւ զհողձ- նուտին այգին տուի ի սբ ուխտս եւ բնա- կիչք սորա
- էտուն ի տարոջն. Ը. աւր ժամ: 2: աւր ինձ: Ա: իմ հաւրն Ստեփանոսի Ա: Նասխաթունին ամուսնոյն իմոյ որ խափանէ զժամ դատի ի Քէ.

*Երեք արձանագրութեան բեկորներ են սրանք, որ խոսնուած են իրար նորոգութեան ժամանակ եւ մասեր կորած: Ուղղանկիւն փակագծի մէջ առնուածները կասկածելի են, թէ նոյն արձանագրութեան մասերն են:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 91.

Բ. Գրքի եր. 67.

ԳԵՂԱՐԴ

Ումեկի եւ Վարդի խառնուած արձանագրութիւնների տակ ձախ կողմի աւանդատան մօտ.

- 1. Ես Մխիթար էտու: Ի: դահեկան ի
- 2. սբ եւ սպասաւորք սորա խոստացան ի տարին: Ա: աւր ժամ ի սբ Սար
- 3. զսի տաւնին, որ խափանէ դատի ի Քէ:

ԾԱՆՈԹ.— Սորա տակն է Վահրամի արձանագրութիւնը, որ խորանն է շինել Ռուզուբանի հետ. տես Յաւելուած Ա. 76, Բ. Գիրք եր. 62:

Մխիթ. Ստ. 10: Օսւ. Mat. XIII. 234 արտադրած Մխիթարեանից, միայն «Ի»-ի փոխարէն «Թ» դահեկան գրած, որ սխալ է:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 92.

Բ. Գրքի եր. 67.

ԳԵՂԱՐԴ

Հարաւային դրան կամարի տակ.

Ես Միթորս միարանեցա սբ ուխտիս էտու: Ճ: դհ: խոստացան: Ե: աւր ժամ:

ԾԱՆՈԹ.— Կասկածելի կարող է լինել միայն յատուկ անուան առաջին տառը: Պէտք է կարծել շինութեան ժամանակուանից, տեղից դատելով, գուցէ նուիրատուի ծախսով զարդարած ճակատաքարը եւ շրջանակը:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 93.

Պատկ. 141. փչ.

ԳԵՂԱՐԴ

Հարաւային պատին, դրնից ձախ խորշի մէջ.

- 1. Կամաւն Այ ես տր Յ
- 2. ուսէփ մի աք ան եցա սբ
- 3. ու խտիս էտ ու: Ի: սպ.
- 4. եւ սպասաւորքս սորա խո
- 5. ստաց ան ի տար ին Ե. ժ ամ: Բ: ինձ...

ԾԱՆՈԹ.— Մխիթ. Ստ. 15. «սորա» չկայ: Օսւ. Mat. 232. առնուած Մխիթարեանից: Ընթերցումը թերի վերջին երկու տողի:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 94.

Բ. Գրքի եր. 67.

Տաճարի հարաւային պատին՝ մօտ ժամատանը:

- 1. Ես Թորոս էտու: Խ: դահեկան...
- 2. եւ սպասաւորք սորա տվին?: Բ: աւր ժամ յանուն իմ կատարեն:

ՅԱԻԵԼՈՒԱՄ Ա. 95.

Բ. Գրքի եր. 67.

Սորա տակը կից.

- 1. Ես Տիրատուր էտու: ԽԴ: դա
- 2. հեկ ան ի դաւիթս եւ սպասաւորքս սորա
- 3. ի տարին: Բ: աւր ժամ անն են ինձ:

ԾԱՆՈԹ.— Մխիթարեան Ստ. Տիրատուրի արձանագրութեան մէջ ունի «:Խ:» դահեկան, պէտք է լինի «:ԽԴ:». «հաւգոյս» պէտք է լինի «գաւիթս». «անեն» պէտք է լինի «առնեն»:

Արձանագրութիւնը պէտք է գրուած լինի մօտաւորապէս 1225 թուին, երբ շինուեցաւ գաւիթը կամ քիչ յետոյ (տ. Բ. Գիրք 79):